12· Գալփալու.—Ղարա-պաճախից $^1/_2$ ժամ հիւսիսային արեւմուտք, 1 $^1/_2$ ժամ Չրի հիւսիսն 13 տուն ք· բնակիչ:

13· Դահար.—1 $^1/_4$ ժամ Գալփալուայ արեւելեան հիւսիսն. որ և Չրից մօտ 2—2 $^1/_2$ ժամ հիւսիս 45 տուն ք· բն· սորա մէկ ժամ հարաւային արեւելք Չիլայ կետուկ 1 ժամ արեւմուտք Ղարղաշան լեռ:

14· Քիւրտ-Ալի.—3 ժամ Դահարի հարաւ. արեւելք· 25 տուն ք· բն· 1 ժամ Շեռեանայ հիւսիսն:

15· Սեք (սեւեր կամ ըստ քրդաց՝ խնձոր մի).—Քիւրտ—Ալիից $^1/_4$ ժամ հարաւ, 16 տուն ք· են:

16· Ապուզէթ.—$^1/_2$ ժամ սեւքի արեւելեան հարաւ, ունի 10 տուն ք· բն· և է մերձ Շեռեանայ:

17· Դուռնակօլ փոքր Ք· գիւղ մէ ի հարաւ խալեաղի մերձ Խնուսայ սահմանի:

Կելին լեռն կը գտնուի Գլիճ և Բոճօյի շղթայի արեւմտեան վերջաւորութեան վերայ, նա և ընդհատած է Խալեաղի արեւելեան հարաւային սահմանը:

Մէարգամիրի լեռնադաշտն նաև տարածուած է Կէլինի արեւմուտք:

Կուռխ լեռն կը գտնուի ուղղակի Խալեաղի արեւելքն, որ խոյացած է դաշտի վերան:

18· ԵԱԶԼԻ ԴԱՇ.—Եազլի-Դաշ գիւղն բնական դրիւնք պէտք է Խալեաղի մասը համարուի, սակայն Բասեանի կառավարութեան կը պատկանի այժմ· Թէև Երասխի Հովտին վերայ կայ սակայն Խալեաղի մօտ լինելուն Խալեաղի վերայ կը համարենք:

Եազլի-Դաշ ես Կարնոյ մի ճանապարհին վերայ կը գտնուի խճուղին որ կանձնի Իշէկ գիւղից ուստի 2 ժամ հարաւ կընկնայ, 20 տուն ք· բն: